ԱՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՖԵԼԻՔՍ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ
էլփոստ՝ felmov@mail.ru

Արևելահայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում 1861-1865թթ. ամերիկյան քաղաքացիական պատերազմի լուսաբանումը և դրան թերթի տված գնահատականը հայ պատմագրությունում հանգամանորեն ուսումնասիրված չէ: Սույն խնդրին շաբաթաթերթն անդրադարձել է «Քաղաքական տեսություն» և «Զանազան համբավներ» բաժիններում՝ հիմնականում ստացված լուրերի, եվրոպական ու ռուսական մամուլի հրապարակումների հիման վրա: «Մեղու Հայաստանի»-ն Ամերիկայի Միացյալ Նահանգների պառակտվելը, արդյունաբերական հյուսիսի և ստրկատիրական հարավի միջև հակամարտությունը համարում է անխուսափելի, որն անպայման պետք է հանգեցներ ներքին պատերազմի: Շաբաթաթերթն ամերիկյան պատերազմը բնութագրում է որպես ազգային և ժողովրդական, որի հիմնական պատճառը համարում է առևտրա-տնտեսական շահերի բախումը, ստրկությունը և ստրկավաճառությունը: Թերթի կարծիքով՝ ամերիկյան նահանգները միայն արտաքուստ են միասին ներկայացնում մի ընդարձակ ու հզոր պետություն: Իրականում դրանք տարբեր են իրենց բնակչության ծագմամբ, լեզվով, կրոնով, կրթությամբ, զբաղմունքով, բնակլիմայական պայմաններով ու հարստությամբ: Այս ամենը ամերիկացիներին խանգարում է լինել համախմբված ու միասնական: Մինչ օրս ամերիկյան նահանգներն ու ժողովուրդը միասնական է եղել շնորհիվ ազատության գաղափարի: Այժմ այդ գաղափարը պատճառ է դարձել արյունահեղ պատերազմի: «Մեղու Հայաստանի»-ի դիտարկմամբ՝ հակամարտող հյուսիսին ու հարավին հաշտեցնելը հեշտ չի լինելու, պատերազմը երկար է տևելու, իսկ կողմերը կրելու են մարդկային ու նյութական մեծ կորուստներ: Պատերազմի հաղթողը լինելու է հյուսիսը, որն ունի ավելի շատ զորք, փող, զարգացած տնտեսություն և մտավոր ներուժ: Ամերիկյան պատերազմը պատմության մեջ լինելու է վերջինը, որտեղ ստրուկներն ու սևամորթները զոհվելու են հանուն իրենց անկախության: «Մեղու Հայաստանի»-ի համոզմամբ՝ պատերազմում հյուսիսի հաղթանակը սկիզբ կդառ-

նա մի քանի միլիոն սևամորթների ազատությանը, ովքեր դարեր շարունակ դատապարտված էին լինելու կիսամարդ, ստրուկ և զուրկ էին մարդկային իրավունքներից: Այսպես թերթն ամերիկյան քաղաքացիական պատերազմը համարում է մարդկության մեջ նշանավոր իրադարձություն:

Բանալի բառեր՝ *Միացյալ Նահանգներ, հարավ, հյուսիս, պառակտում, համադաշնություն, պատերազմ, ստրկության վերացում, հայ մամուլ:*

1861-1865թթ. ամերիկյան քաղաքացիական պատերազմը Միացյալ Նահանգների պատմության ամենաողբերգական էջն է՝ իր աննախադեպ մարդկային կորուստներով: Շուրջ երկու հազար մանր ու մեծ կռիվների ընթացքում 616 հազար մարդ զոհվել է, 412 հազարը՝ վիրավորվել, 410 հազարը՝ անհայտ կորել, իսկ 618 հազար մարդ գերի ընկել: Այս պատերազմը Նոր աշխարհում երբևէ տեղի ունեցած ամենամեծ պատերազմն է, որի ժամանակ զոհվել է ամերիկյան ավելի շատ քաղաքացի, քան ԱՄՆ մասնակցությամբ ցանկացած այլ պատերազմում, այդ թվում՝ Երկրորդ աշխարհամարտում[1]:

Ամերիկյան պատերազմը լայն արձագանք է գտել ժամանակի եվրոպական մամուլում: Անմասն չի մնացել նաև հայ պարբերական մամուլը: Պատերազմի ընթացքը լուսաբանած տասնյակ հայ պարբերականներից մեկը ազգային-պահպանողական հոսանքի ձայնափող «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթն է: Այն սկսած 1858թ. հունվարից լույս էր տեսնում Թիֆլիսում Ստեփանոս քահանա Մանդինյանցի խմբագրությամբ և հիմնականում տպագրում էր քաղաքական լուրեր, կրոնական բնույթի հոդվածներ, թարգմանություններ, թատերգություններ և այլն[2]:

Շաբաթաթերթին թղթակցում էին Թիֆլիսի, Մոսկվայի և հայաբնակ այլ վայրերի մտավորականներ և ուսանողներ, ովքեր իրենց հրապարակումներով աջակցում էին Կովկասի միակ ազգային թերթին և պահպանողական հայացքների տեր Ս. Մանդինյան քահանային: Այս իմաստով շաբաթաթերթի, հատկապես քաղաքական թեմաներով հրապարակումները «Մեղու Հայաստանի»-ն դարձնում էին հետաքրքիր ու գրավիչ: Ս. Մանդինյանցն անձամբ քաղաքական թեմաներով խմբագրականներ չէր գրում և վերլուծու-

---

[1] Տե՛ս Уильям З., Фостер, Очерк политической истории Америки, Пер. с. анг., М., 1953, с. 383.
[2] Տե՛ս Հ. Գրիգորիս վ. Գալեէմքերեան, Պատմութիւն հայ լրագրութեան, Վիէննա, 1891, էջ 181:

թյուններ չէր կատարում: Իր թերթի նպատակադրության մասին նա գրում է. «Ինչպես բնական մեղուն ինքն պստիկ է, տկար ձայնով բզզում է, բայց Աստուած նրան մեծ շնորհք է պարգևել երկու տեսակ օգտի համար՝ մեղր և մոմ. մինը վայելում են մարդիկ, իսկ մյուսը՝ եկեղեցիք և այլ սուրբ գործքերի կարողութիւնք: Այդպես էլ «Մեղու» լրագիրն այդ տեսակ օգուտն է տալիս, քաղաքական լուրեր և բանասիրական գրուածքներ»[1]: «Մեղու Հայաստանի» քաղաքական հրապարակումների հեղինակները հիմնականում թերթի թղթակիցներն էին, ովքեր անկողմնակալ դիրքերից լուսաբանում էին աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները: «Մեղու Հայաստանի»-ն ամերիկյան պատերազմին անդրադառնում է «Քաղաքական տեսություն» և «Զանազան համբավներ» բաժիններում: Շաբաթաթերթի տեղեկատվության աղբյուրը պաշտոնական, կիսապաշտոնական ու հեռագրական լուրերն էին, որոնց Ս. Մանդինյանցը իրազեկ էր եվրոպական և ռուսական մամուլի հրապարակումներից: Ի տարբերություն ամերիկյան պատերազմը լուսաբանած հայ որոշ պարբերականների, որոնք իրենց լրատվությունում կարևորում էին պատերազմի ընթացքը, ռազմական գործողությունները և ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինքոլնի (1809-1865թթ.) գործունեությունը, «Մեղու Հայաստանին» շեշտը դնում է պատերազմի պատճառների բացահայտման և դրա հնարավոր հետևանքների վրա: Թերթի թղթակիցներից Ա. Ե. Սանահնեցին, պատերազմն սկսվելուց ամիսներ անց՝ 1861թ. նոյեմբերին, տպագրած «Ամերիկայի ներկան և ապագան» վերնագրով հոդվածում Միացյալ Նահանգների պառակտման և պատերազմի բռնկման պատճառը համարում է Հարավային Քարոլինա, Միսիսիպի, Ալաբամա, Ֆլորիդա, Ջորջիա, Նոր Օռլեան, Լուիզիանա և Թեքսաս նահանգների բաժանվելը հյուսիսային նահանգներից: Նրա տեղեկությամբ՝ ԱՄՆ-ից բաժանված հարավային նահանգները 5 միլիոնից ավելի բնակչություն ունեին, որոնց մեծ մասը «ճորտ կամ գերի սևամորթ են»: Այս նահանգները ստեղծել են ժամանակավոր կառավարություն և ընտրել երկու նախագահ[2]:

Հոդվածագիրն իրավացի է այնքանով, որ 1860թ. դեկտեմբերի 20-ին՝ ԱՄՆ կազմից Հարավային Քարոլինա նահանգի դուրս գալուց հետո, 1861թ. հունվար-փետրվարին այդ քայլին գնացին ևս յոթ նահանգ: 1861թ. փետրվարին այս նահանգները ձևավորեցին Համադաշնություն և ժամանակավոր կառավարություն, որի նախագահ ընտրվեց Միսիսիպի նահանգից նախկին

[1] «Մեղու Հայաստանի», 1861, 3 սեպտեմբերի, թիվ 36, էջ 281:
[2] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1861, 4 նոյեմբերի, թիվ 45, էջ 336-337:

սենատոր Ջեֆֆերսոն Դևիսը (1808-1889թթ.), իսկ փոխնախագահ Ալեքսանդր Սթիվենսը (1812-1883թթ.), պետության մայրաքաղաք հայտարարվեց Ալաբամա նահանգի Մոնթգոմերի քաղաքը[1]: «Մեղու Հայաստանի»-ն, ճիշտ ներկայացնելով հարավային նահանգների անջատումը, սխալմամբ դրանց թվում նշում է Ֆլորիդա նահանգի կենտրոն Նոր Օռլեանը և Համադաշնության նախագահին ու փոխնախագահին անվանում է երկու նախագահ: Ինչ վերաբերում է հարավային նահանգների ճորտ և գերի սևամորթներին, ապա թերթը նկատի ունի ստրուկներին, որոնք հիմնականում սևամորթներ էին: «Մեղու Հայաստանի»-ի հոդվածագրի համոզմամբ՝ հարավային նահանգների այդ քայլը «ներգործութիւն ունեցաւ և կունենա բոլոր Եվրոպայի վրա, առաւել Անգլիայի վրա»: Նրա կարծիքով՝ համաշխարհային առևտուրը կտուժի, կլինի ճգնաժամ, որովհետև ԱՄՆ-ից բաժանված նահանգները տարեկան 1 միլիոն 200 հազար բեռ բամբակ էին արտահանում Անգլիա: Պատերազմի ժամանակ բամբակ չի արտահանվի, քանի որ դրանում շահագրգռված չեն բամբակ մշակող սևամորթները: Նրանք գիտեն, որ «պատերազմը իրենց ազատութեան համար է, ամենևին էլ սիրտ չունին բան շինելու»: Հարավային նահանգները իրենց ձեռքի տակ ունեն «շատ ճորտեր», ցանկանում են, որ նրանք չազատագրվեն, և ուզում են սկսել ազատ ծովային առևտուր (առանց մաքս պահանջելու): Նրանք ցանկանում են իրենց նավահանգիստները բացել առևտրական բոլոր նավերի համար և դրանով հյուսիսային նահանգների առևտրին վնաս հասցնել: Հյուսիսային նահանգները «իրանց կողմից գերիք վաճառելը կամենում են վերջացնել», բայց իրենց առևտրական շահից ելնելով՝ փակում են իրենց նավահանգիստները օտարերկրյա նավերի համար[2]: «Մեղու Հայաստանի»-ի թղթակցի կողմից սա ուշագրավ և ճիշտ դիտարկում է, որովհետև ամերիկյան քաղաքացիական պատերազմի պատճառներից մեկը առևտրա-տնտեսական խնդիրն էր: Այս մոտեցմամբ «Մեղու Հայաստանի»ն առանձնանում է ամերիկյան պատերազմը լուսաբանած հայ շատ պարբերականներից, որոնք պատերազմի հիմնական պատճառը համարում էին ստրկությունը և ստրկավաճառությունը:

Իրականում հյուսիսի և հարավի նահանգների երկպառակության պատճառները շատ էին. դրանք առևտրական, տնտեսական, սոցիալական և քաղաքական բնույթ ունեին, բավական խորն էին և անհաղթահարելի: Ստրկության հարցը, անշուշտ, առանցքայիններից էր, թեև նախագահ Ա. Լինքոլնը ի սկզբանե կասկածի տակ չէր դնում ստրկության առկայությունը

[1] Տե՛ս История США, Глав. ред. Г. Н. Севостьянов, Т. 1, М., 1983, с. 406; Э. Иванян, История США, М., 2008, с. 225. Р. Ф. Иванов, Гражданская война в США, М., 1960, с. 39.

[2] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1861, 4 նոյեմբերի, թիվ 45, էջ 337:

հարավային նահանգներում: Առավել հակոտնյա էին ֆինանսական, հարկային և առևտրատնտեսական հարցերը, որոնք, հարավցիների համոզմամբ, «հյուսիսի յանկիները» իրականացնում էին ի վնաս հարավի շահերի: Բանն այն է, որ ԱՄՆ բյուջեի հարկային եկամուտների 80 տոկոսը ապահովում էր հարավը, որը հյուսիսի արդյունաբերական ապրանքների գլխավոր սպառողն էր: Հարավը տարեկան արտահանում էր 213 մլն. դոլարի արտադրանք, հիմնականում՝ բամբակ, իսկ հյուսիսը՝ ընդամենը 47 մլն դոլարի: Հարավի նավահանգիստներից բամբակի արտահանումը իրականացվում էր հյուսիսի նավատերերին պատկանող նավերով: Հյուսիսի և հարավի տնտեսական հակասությունները սրվեցին հատկապես 1861թ. մարտի 2-ին՝ ԱՄՆ կոնգրեսի՝ «Տարիֆների մասին» օրենքի ընդունումից հետո, որից մեկ ամիս անց հարավը պատերազմ սկսեց: Այդ օրենքը մաքսային տուրքերն ավելացնում էր 47 տոկոսով, որն անընդունելի էր հարավի համար և թշնամաբար ընկալվեց նույնիսկ Անգլիայում, որը ԱՄՆ-ի հետ ազատ առևտրի կողմնակից էր[1]:

«Մեղու Հայաստանի»-ի հոդվածագրի կարծիքով՝ հյուսիսի և հարավի նահանգներին հաշտեցնել հնարավոր չէ, որովհետև նրանցից ոչ մեկը իրենց «պահանջմունքներից ձեռք չեն վեր առնելու»: Սրանից ելնելով նա պատերազմի սկսվելը համարում է անխուսափելի, բայց «թէ ինչ օգուտ պէտք է դուրս գայ էդ ազգային և ժողովրդական պատերազմից», դժվարանում է կռահել[2]: Շաբաթաթերթի թղթակիցն իրավացի է, քանի որ հյուսիսի և հարավի միջև պատերազմն իսկապես անխուսափելի էր: Տնտեսական ու քաղաքական մի շարք պատճառներով պայմանավորված՝ ամերիկյան ժողովուրդը պատերազմի նախօրյակին մտովի արդեն պառակտված էր[3]:

Հյուսիսի և հարավի միջև անխուսափելի կոնֆլիկտը օրակարգային էր և, ինչպես այդ օրերին գրում էր ամերիկյան մամուլը, «սեցեսսիան[4] միայն ժամանակի հարց էր»[5]: Ճիշտ ընկալելով հյուսիսի և հարավի հակամարտության անխուսափելիությունը՝ «Մեղու Հայաստանի»-ի թղթակիցը ակնհայտ ճշմարտության է համարում, որ «հիւսիսայինքը յաղթող կը հանդիսանան հարաւայնոց վրա, որովհետև հիւսիսայնիք թէ զօրքով, թէ փողով և կամ մտաւոր զօրութեամբ ուժեղ են քան թէ հարաւայինք»[6]: Հյուսիսի հաղթանա-

---

[1] Տե՛ս Э. Иванян. Указ. соч. с. 235; Р. Ф. Иванов. Указ.соч., с. 17-18.

[2] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1861, 4 նոյեմբերի, թիվ 45, էջ 337:

[3] Տե՛ս Foner E. Politics and Ideology in the Age of the Civil War. New York, 1980, p. 53.

[4] Սեցեսսիա՝ լատիներեն secession՝ անջատվել, առանձնանալ, դուրս գալ, ուրանալ: Իրավական առումով սեցեսսիան պետության կազմից որևէ մասի անջատվելն է: Տե՛ս Словарь иностранных слов. М., 1982, с. 452.

[5] Տե՛ս История США. Т. 1, с. 406.

[6] «Մեղու Հայաստանի», 1861, 4 նոյեմբերի, թիվ 45, էջ 338:

կը կանխատեսող թերթի հոդվածագիրն այս հարցում նույնպես իրավացի էր, քանի որ հյուսիսը նահանգների թվով, բնակչությամբ, տնտեսական և ֆինանսական միջոցներով, բանակ զորակոչած զորքի քանակով անհամեմատ գերազանցում էր հարավին, որը, սակայն, պատերազմի սկզբում վճռորոշ դեր չխաղաց[1]: «Մեղու Հայաստանի»-ի հոդվածի հեղինակը միաժամանակ համոզված էր, որ «պատերազմը շուտ չէ վերջանալու և թէ վերջը երկու պատերազմող կողմերն էլ պէտք է թուլանան»: «Մեղու Հայաստանի»-ի թղթակիցն իրավացի դուրս եկավ, որովհետև պատերազմը տևեց չորս տարի և մարդկային մեծ կորուստներ պատճառեց թե՛ հյուսիսին և թե՛ հարավին: Նրա կարծիքով՝ հյուսիսի համար այս պատերազմը վնասակար է նաև այն պատճառով, որ մեծ մասամբ հյուսիսի հարուստների փողերը վարկով տրված է հարավցիներին: Քանի որ հիմա հարավում սևամորթները ոտքի են կանգնում և հողագործությամբ չեն զբաղվում, իսկ գործարարները չեն կարողանում հյուսիսցիների փողերը օրինավոր գործի մեջ դնել, այդ պատճառով շատերը կսնանկանան: Մյուս կողմից, շարունակում է իր դատողությունները հոդվածագիրը, հարավցիները կբարձրացնեն մաքսատուրքերը, չեն ընդունի հյուսիսից ստացվող ապրանքները, կթանկացնեն իրենց բամբակեղենի գինը, որի պատճառով հյուսիսը կզրկվի իր առևտրի աղբյուրից: Հարավցիները բացի այն, որ նեղություն են կրում ապստամբ սևամորթներից ու ստրուկներից, այս «համազգային պատերազմում կզրկվեն ինչպես մտավոր ուժից, այնպես էլ նյութական միջոցներից, քանի որ հարավում պահպանվում է ստրկությունը: «Հիմա հարավը միշտ կախում կունենա հյուսիսից»[2], - գրում է թերթի հոդվածագիրը և իր միտքը հիմնավորում նրանով, որ հարավը ներկայումս հյուսիսից շատ բան է ստանում՝ արդյունաբերական ապրանքներ, մեքենաներ, անգամ հաց, բայց արտահանում է միայն բամբակ: Բացի դրանից՝ հյուսիսն ունի «մարմնաւոր աշխոյժ, խելացի գործունեութիւն, կատարեալ ազատութիւն»: Հյուսիսը հասել է նրան, որ այս պատերազմի ժամանակ ամբողջ Եվրոպան, ամբողջ աշխարհը մեծ ուշադրությամբ հետևում են Հյուսիսային Ամերիկայի նորանոր գյուտերին: Հյուսիսի բոլոր նավահանգիստները լիքն են ամեն տեղից եկած նավերով, որոնց նպատակն է միայն գալ և տեսնել ամերիկացիների զարմանալի գործունեությունը և նրանցից աշխատել սովորել: Ամերիկայի բոլոր խելոք մարդիկ ուրախ են հարավային նահանգներից բաժանվելուն, որովհետև նրանք գցում են իրենց պատիվը ստրուկների առևտրով: Ամերիկան մոտենում է այն դրությանը, շարունակում է դատողություններ անել Ա. Ե. Սանահնեցին, երբ իր

[1] Տե՛ս История США, Т. 1, с. 412-413; Р. Ф. Иванов, Указ.соч., с. 44-49; Э. Иванян, Указ. соч. с. 233.

[2] «Մեղու Հայաստանի», 1861, 4 նոյեմբերի, թիվ 45, էջ 337:

զորեղ ձայնը մեծ նշանակություն պետք է ունենա աշխարհի բոլոր մասերում և աստղերով զարդարված Ամերիկայի ռազմական նավերի առագաստը նրան պետք է «համարուի խելացի ազատութեան, ճշմարտութեան և մարդկային իրաւանց հաւասարակշռութեանը»[1]:

Բավական հավաստի դատողություններ անելով ամերիկյան պատերազմի առևտրատնտեսական պատճառների մասին՝ «Մեղու Հայաստանի»-ի թղթակիցը հպանցիկ անդրադառնում է նաև ստրկության հարցին: Նա գրում է, որ Միացյալ Նահանգները 77 տարվա անկախությունից հետո հիմա պառակտված են, բաժանվել են հյուսիսի և հարավի, որոնք պատերազմում են «իրանց մէջ և պատճառը գերիներու առևտուրն է»: Չանդրադառնալով ստրկության խնդրին՝ թղթակիցը կանխատեսում է, որ «Ամերիկայի պատերազմը վերջինն է պատմութեան մէջ, որ ճորտերն ու գերիքը իրենց անկախութիւնը ձեռք բերելու համար զոհ են լինում»[2]: Նրա կարծիքով՝ նման բան կարելի է տեսնել միայն բարբարոսության ժամանակներում և ոչ թե 19-րդ դարում, այն էլ «Ամերիկայի Միացյալ Նահանգների նման լուսավոր երկրում»: Թղթակիցը հասկանում էր, որ պառակտված Միացյալ Նահանգներում արդյունաբերական հյուսիսը և ստրկատիրական հարավը զարգացման տարբեր ճանապարհ են ընտրել: Տվյալ պահին նա զանազանում է միմյանցից երկու տարբեր Ամերիկա: Ըստ նրա՝ հյուսիսային նահանգներում «մենք տեսնում ենք անգլո-սաքսերի սերունդներին, որոնք իրենց հարազատ եղբայրների պես առաջադիմում են և նրանց պես աշխատում են սաղ երկրագունդը իրանց ձեռքը գցել»: Մյուս կողմից՝ հարավային նահանգներում «մենք տեսնում ենք սևամորթ, ճնշված, ոտքի տակ ընկած ազգ, որին իր նման մարդը անասունի տեղ է դնում»[3]: Ըստ էության, դատապարտելով ստրկությունը, Ա. Ե. Սանահնեցին անճշտություն է թույլ տալիս, թե իբր Միացյալ Նահանգների հիմնադիր Ջ. Վաշինգտոնը միտք ուներ ազատել ստրուկներին, իսկ նահանգների երևելի դեմքերը միշտ աշխատել են այս գաղափարը իրականություն դարձնել:

Իրականում Միացյալ Նահանգների «հիմնադիր հայրերը», ի դեմս առաջին նախագահ, խոշոր ստրկատեր Ջ. Վաշինգտոնի և նրա համախոհ ֆեդերալիստների, ստրկության վերացման գաղափարը չներառեցին ոչ ամերիկյան «անկախության հռչակագրում» և ոչ էլ սահմանադրությունում[4]: Չնայած թույլ տված անճշտությանը՝ Ս. Ե. Սանահնեցին հետաքրքիր եզրակացություն է անում: Ըստ նրա՝ եթե հյուսիսային նահանգները կարողանան

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում

[4] Տե՛ս Яковлев Н., Джордж Вашингтон, М., 2003, с. 160-163, 301-310; История США, т. 1, с. 134-137, 190-191.

«վախճանին հասցնել այս ազնիւ նպատակը, այն ժամանակ իրաւունք ունին այդ նահանգները կոչուիլ Ամերիկեան հասարակապետութիւն, ճշմարիտ ազատութեան և հասարակապետութիւն, ճշմարիտ ազատութեան և հաւասարութեան երկիր»[1]: Հոդվածագիրը համոզված է, որ Միացյալ Նահանգների բաժանումը և պատերազմը «ժամանակավոր է և դա պետք է բերի մարդկութեանը մեծ օգուտ. Մի քանի միլիոն գերիք կազատի գերութիւնից և կը բարձրացնի դրանց մարդկութեան, անկախութեան և լուսավորութեան աստիճանը»[2]:

1861թ. հետագա հրապարակումներում «Մեղու Հայաստանի»ն ամերիկյան պատերազմին չի անդրադառնում: Այս խնդիրը շաբաթաթերթի խմբագրի համար կրկին լուսաբանման նյութ դարձավ, երբ թերթին սկսեց աշխատակցել հմուտ լրագրող Միքայել Պատկանյանը: Ստանձնելով թերթի արտաքին լուրերի և քաղաքական տնտեսությունների բաժնի պատասխանատվությունը, նա հատկապես ռուսական առաջադիմական մամուլի հրապարակումների հիման վրա նկատալիորեն աշխուժացրեց թերթի հրապարակախոսությունը: Խմբագիր Ս. Մանդինյանցը նրան է պարտական իր թերթի «1861-1862թթ. բարոյական նկարագրի անվերապահ բարելավման համար»[3]: Մ. Պատկանյանը ամերիկյան պատերազմի մասին ռուսական «Кавказ» թերթի հրապարակումների վերլուծությամբ հանգում է այն հետևության, որ հիմա Ամերիկայի Միացյալ Նահանգները «բոլորովին ուրիշ աշխարհ» է, երկու մասի բաժանված, որտեղ հարավը պատերազմում է հօգուտ, իսկ հյուսիսը՝ ընդդեմ ստրկության: Հյուսիսային և հարավային նահանգների «երկպառակութեան սկիզբը» նա համարում է 1860 թվականը, երբ դեկտեմբերի 20-ին Հյուսիսային Քարոլինա նահանգը հայտարարեց ԱՄՆ կազմից դուրս գալու մասին, որին հետևեցին ստրկատիրական մյուս նահանգները: Բայց հյուսիսի և հարավի նահանգների միջև «ընտանեկան պատերազմ բորբոքվեց» 1861թ. մայիսին, երբ անջատողականները հարձակվեցին Սամտեր բերդի վրա: Այդ օրվանից սկսած՝ երկու կողմերը մեծամեծ զոհեր են ունենում հաղթանակ տանելու համար, բայց հաջողության չեն հասնում[4]: Հավաստի ներկայացնելով պատերազմի սկսվելը՝[5] Մ. Պատկանյանը գրում է, որ հարավի անջատողականները, որոնց ձեռքում էր պատերազմի սկզբում Վիրջինիայի մի մասը, չկարողացան հարձակվել մայրաքաղաք Վաշինգտոնի վրա: Հյուսիսցիներն էլ, դիմակայելով թշնամուն, չզիջե-

---

[1] «Մեղու Հայաստանի», 1861, 4 նոյեմբերի, թիվ 45, էջ 337:

[2] Նույն տեղում, էջ 338:

[3] Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր. Խմբագրական կոլեգիա՝ Ա. Ա. Խառատյան, Մ. Հ. Մխիթարյան, Լ. Մ. Գևորգյան, հ. 1, Երևան, 2006, էջ 199:

[4] «Մեղու Հայաստանի», 1862, 3 փետրվարի, թիվ 5, էջ 18:

[5] Տե՛ս История США, т. 1, с. 411; Р. Ф. Иванов, Указ.соч., с. 53; Э. Иванян, Указ. соч. с. 231.

ցին Պոտոմակի ափը և նրանց բանակը հեռացրին դաշնային մայրաքաղաքից: Ըստ թերթի՝ 1861թ. վերջին հյուսիսցիների գործերը համեմատաբար հաջող ընթացան, նրանք նվաճեցին Ֆորտ Բոյալը և Բոֆորտը, որով սպառնալիք ստեղծեցին հարավի խոշոր քաղաքներ Չարլստոնի ու Սավաննայի վրա: Այդ ժամանակ Միսիսիպիի կողմերում ընթացող կռիվները սպառնում էին հասնել մինչև Նոր Օռլեան[1]:

1863թ. հունվարին «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի խմբագրի պաշտոնը ստանձնեց Պետրոս Սիմեոնյանը (1830-1911թթ.): Մոսկվայի Լազարյան ճեմարանի և Տարտուի համալսարանի շրջանավարտ Պետրոս Սիմեոնյանը, ի տարբերություն Ստեփանոս քահանա Մանդինյանցի, թերթի հետագա համարներում առավել շատ էր կարևորում աշխարհի քաղաքական անցուդարձը լուսաբանելը: Եթե Ս. Մանդինյանցը քաղաքական թեմաները վստահում էր իր թղթակիցներին, ապա Պ. Սիմեոնյանը ինքն էր հանդես գալիս այդ մասին խմբագրականներով ու հրապարակումներով: Նա ընդգծված հետաքրքրությամբ հետևում էր եվրոպական երկրներում ընթացող քաղաքական անցքերին, հատկապես իտալացիների, լեհերի ազատագրական և գերմանացիների ազգային համախմբման համար պայքարին, որոնց վերաբերյալ տպագրում էր ընդարձակ լուրեր: Քաղաքական թեմաներով նրա խմբագրականները և հրապարակումները ավելի բովանդակալից են, հանգամանալից ու հագեցած, որտեղ նա որոշակի դիրքորոշում է ցուցաբերում կամ գնահատական տալիս այս կամ այն իրադարձությանը: 1860-ական թվականների սկզբի եվրոպական քաղաքական իրադարձությունների թոհուբոհը պարբերաբար ներկայացնելուց բացի՝ Պ. Սիմեոնյանը չի անտեսում նաև ամերիկյան պատերազմի լուսաբանումը: Ամփոփելով անցած՝ 1863թ. եվրոպական քաղաքական կյանքի հիմնական իրադարձությունները՝ նա թերթի «Քաղաքական տեսություն» խմբագրականում գրում է. «Ազգերը առանց քաղաքական կեանքի իսկապէս անկեանք են»: Նրանց գործունեությունը մարդկության համար վայելուչ նշանակություն չի կարող ունենալ առանց քաղաքական կյանքի, որի մեջ միայն ազգերը կարող են զարգացնել իրենց հոգևոր և նյութական կարողությունները, կատարելագործել իրենց ու մարդկության համար օգտակար գործ անել: Ըստ այսմ՝ Պ. Սիմեոնյանը 1863թ. եվրոպական կարևոր քաղաքական իրադարձությունները համարում է Դանիայի արքայազն Գեորգի՝ Հունաստանի թագավոր ընտրվելը, ցարական Ռուսաստանի դեմ լեհերի՝ անկախության ու ազատության համար ապստամբելը, Դանիական թագավորությունից դուրս գալու և Գերմանական միությանը միավորվելու նպատակով գերմանաբնակ Շլեզվիգ-Հոլշտայնի դքսություններում սկսված ազգային շարժումը և Իտալիայի միավորման

[1] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1862, 3 փետրվարի, թիվ 5, էջ 18:

համար պայքարի անավարտ մնալը[1]: Եվրոպայից դուրս քաղաքական գլխավոր հարցը, «Մեղու Հայաստանի»-ի խմբագրի կարծիքով, Ամերիկայի Միացյալ Նահանգներում «եղած երկպառակութիւնը և արիւնահեղ պատերազմն է, որի նկարագրութիւնը կարող է միայն սարսափեցնել մարդոց, որովհետև նա լիքն է բարբարոսութիւններով, որով մարդիկ այնտեղ միմեանց հետ վարվում են»[2]: Թերթի գնահատականով ամերիկյան 32 նահանգները ունեն իրենց կառավարությունը, միմյանցից անկախ են և միայն արտաքուստ են միասին ներկայացնում մի ընդարձակ և հզոր հանրապետություն: Աշխարհում չկա գեթ մեկ ուրիշ պետություն, որը Միացյալ Նահանգների նման «ունենար այնպէս պէսպիսութիւն ամէն կողմից, ինչպես այս հասարակապետութիւնը»[3]: Այդ բազմազանությունը թերթը համարում է ամերիկյան բնակչության ծագումը, լեզուն, կրոնը, լուսավորության աստիճանը, զբաղմունքը և բարոյական կյանքը: Ամերիկյան նահանգները տարբեր են նաև իրենց բնակլիմայական պայմաններով, բնական հարստությամբ, հողերի բարեբերությամբ, ինչպես նաև մարդկանց կենցաղավարությամբ և զբաղմունքով: Այսքան բազմազան նահանգները, ըստ թերթի, «չէին կարող երբեք ձուլվիլ միասին և մի մարմին կազմել», եթե մի զորեղ ու հաղթական գաղափար չունենային: Այդ գաղափարը, «Մեղու Հայաստանի»-i խմբագրի կարծիքով «ազատության գաղափարն է», որն այսքան ժամանակ նահանգներին չէր թողնում միմյանց դեմ մաքառել, այլ հնարավորություն էր տալիս զարգանալ: Այժմ այդ «ազատութեան կատարեալ գաղափարը պատճառ դառաւ այն արիւնահեղ պատերազմին յիշեալ նահանգների մեջ, որ նոր մինչև ցայժմ էլ շարունակվում է»[4]: Պ. Սիմեոնյանը, դրսևորելով Ամերիկայի պատմության իմացություն, գրում է, որ 1783թ. Փարիզի հաշտության պայմանագրով Անգլիայից անկախություն ստացած ամերիկյան նահանգները անցած 80 տարիների ընթացքում աստիճանաբար հզորացան և հարստացան: Դրանք երկու մասի բաժանվեցին՝ «իրանց լուսաւորութեան աստիճանով և մարդկային իրաւանց վերայ ունեցած ուղղութեամբ», որոնցից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում որոշակի առաջընթաց ունեցավ: Թերթի գնահատմամբ՝ այդ մասերից մեկը «վաճառաշահ, լուսաւորեալ և մարդոց իրաւանց հաւասարութիւնը ճանաչող» հյուսիսային նահանգներն են, իսկ մյուսը՝ «երկրագործ, տգետ ու մարդկային իրաւանց հակառակ եղող ստրկութիւնը պաշտպանող հարաւային նահանգները»[5]: Նահանգների զարգացման տարբեր ճանապարհները նկատի ունենալով՝ «Մեղու Հայաստանի»-ն եզրակացնում է. «եր-

[1] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1864, 4 հունվարի, թիվ 1, էջ 1-3:
[2] Նույն տեղում, էջ 3:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 4:

կու բոլորովին միմեանց հակառակ տարրերը չէին կարող միշտ միմեանց հետ հաշտ մնալ, ինչպէս լոյսն ու խաւարը»: Ազատասեր հյուսիսային նահանգները պահանջում էին, որ «ստրկութիւնը, իբրև մարդկութեան անպատուութիւն բերող և մարդոց էլ անվայել գործ, ջնջվի իրանց տէրութեան միջից»: Հարավի նահանգների երկրագործ բնակիչները, որոնք իրենց ընդարձակ ագարակները մշակելու համար ստրուկների կարիք ունեին, իրենց անձնական շահից ելենելով՝ հակադրվեցին հյուսիսցիների պահանջին, որից «ծագեցաւ ահա այն սարափելի պատերազմը նոցա մէջ»[1]:

«Մեղու Հայաստանի»-ի կարծիքով՝ այս հարցը վաղ թե ուշ լուծվելու է «նախախնամութեան օգնութեամբը, համաձայն հիւսիսցիների պահանջմանը, որով մարդկային իրաւունքը և ազատութիւնը յաղթող պէտք է հանդիսանայ մարդոց շահախնդրութիւնից ծագած բռնութեանը վերայ»[2]: Վերը նշված խնդիրները համարելով մարդկության համար տվյալ պահին ամենակարևորներն ու հրատապը՝ «Մեղու Հայաստանի»-ն պարտավորվում է իր փոքրաթիվ, բայց ընթերցասեր, հետաքրքրվող ու հարգարժան ընթերցողներին տեղեկություններ տալ, թե դրանք ի՞նչ ընթացք ու զարգացում են ունենալու առաջիկայում և ինչպե՞ս են վճռվելու:

Հավատարիմ մնալով իր պարտավորվածությանը՝ «Մեղու Հայաստանի»-ն տեղեկացնում է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների «ներքին պատերազմը» շարունակվում է նույն դաժանությամբ, անզիջում ընթացքով և փոփոխական հաջողություններով: Հակամարտող կողմերը նորից մեծամեծ պատերազմական պատրաստություններ են տեսնում: Թերթի կարծիքով՝ այս պատերազմը «իր խստութեամբ և մեծ արիւնահեղութեամբ մարդկութեան պատմութեան մէջ շատ նշանաւոր տեղ է բռնելու: Ամերիկացւոց ամօթի համար»[3]:

Սա ամերիկյան պատերազմի մի նոր ընկալում ու գնահատական է թերթի կողմից: Եթե 1861թ. թերթի թղթակից Ա. Ե. Սանահնեցին ամերիկյան պատերազմի նշանակությունը համարում էր հյուսիսի հաղթանակի արդյունքում մի քանի միլիոն սևամորթ ստրուկների ազատությունը, ապա 1864թ. հրապարակման մեջ թերթը, հյուսիսի սպասված հաղթանակը չտեսնելով, շարունակվող արյունահեղ պատերազմը համարում է ամերիկացիների ամոթը: Որպես դրա վկայություն՝ «Մեղու Հայաստանի»-ն պատմում է 1864թ. ապրիլ-մայիսին հյուսիսի և հարավի զորքերի միջև տեղի ունեցած չորս մեծ կռիվներից երկուսի մասին: Ըստ թերթի՝ հյուսիսի զորքերի հրամանատար գեներալ Ուլիս Գրանտի (1822-1885թթ.) և հարավի զորքերի հրա-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Մեղու Հայաստանի», 1864, 11 ապրիլի, թիվ 15, էջ 123:

մանատար գեներալ Ռոբերտ Լիի (1807-1870թթ.) ընդհարման հետևանքով երկու կողմից շատ զոհեր են եղել, բայց ոչ մեկը հաղթանակ չի տարել: Թերթի պատմելով՝ Նյու Յորքից ստացված լուրերը հայտնում են, որ գեներալ Ռ. Լին կորցրել է ութ հազար զինվոր և տվել 20 հազարի չափ վիրավոր: Կռվից հետո նա Ու. Գրանտից խնդրել է 48 ժամ, որպեսզի սպանվածներին թաղի, բայց Ու. Գրանտը նրա խնդրանքը մերժել է՝ ասելով, թե ինքը մեռելներին թաղելու ժամանակ չունի: Այդ կռիվների արդյունքում ամբողջ գնդեր են ոչնչացել: Մասնավորապես Նյու Յորքի 9-րդ գնդի 600 հոգուց մնացել է միայն 40 հարյուրապետ և 15 զինվոր: 73-րդ գնդի 700 հոգուց 620-ը սպանվել են: Յոթ նշանավոր գեներալներ են ընկել մարտի դաշտում: Թերթի բնութագրմամբ Ու. Գրանտն այնպիսի հրամանատար է, ում համար մարդկանց կյանքը խաղալիք է: Նա կարճ ժամանակում 9 մղոն ճանապարհ է անցել և ամեն իջևանած տեղում 900 մարդու դիակ թողել: «Գրանտի անգութ գործողութիւնները ամէն տեղ վատ ներգործութիւն են ունենում»,-եզրակացնում է թերթը[1]: «Մեղու Հայաստանի»-ն նկատի ունի 1864թ. մայիսին պատերազմական գործողությունների կենտրոնական ճակատում գեներալ Ու. Գրանտի 120 հազարանոց բանակի հարձակումը երկու անգամ փոքրաթիվ Ռ. Լիի բանակի վրա, որի ժամանակ հյուսիսի հրամանատարը հսկայական զոհեր տվեց: Տասնօրյա կռիվների ժամանակ նա մոտ 27 հազար սպանված ու վիրավոր ունեցավ և 4 հազար անհետ կորած: Հունիսի 3-ին գեներալ Ու. Գրանտը 7 հազար զոհ տվեց Քոուլդ-Հարբորի վրա գրոհելիս, իսկ Պիտսբուրգի մոտ ևս 10 հազար այն դեպքում, երբ Ռ. Լիի կորուստը կազմում էր 5 հազար[2]:

1864թ. նախագահական ընտրությունների քարոզարշավի օրերին հյուսիսային նահանգներում կտրուկ ակտիվացան խռովարար հարավի հետ հաշտություն կնքելու տրամադրությունները: Դրա կողմնակիցը ոչ միայն «խաղաղ դեմոկրատներն» ու ստրկության հակառակորդներն էին, այլև անգամ Ա. Լինքոլնի կառավարության որոշ անդամները: Հաշտութուն կնքելու տրամադրությունների մասին «Մեղու Հայաստանի»-ն հղում է անում ամերիկյան կիսապաշտոնական «Index» թերթի մի լրատվությանը, որը մեծ նշանակություն էր տալիս Օհայո նահանգի կոնգրեսական Լոնգի ելույթին: Նա հայտարարել էր, որ վերջապես հյուսիս-արևմտյան նահանգները ստիպեցին ԱՄՆ Կոնգրեսին լսել ճշմարտությունը: Ըստ ամերիկյան թերթի՝ թեպետ պատերազմը չի դադարել և հաշտություն չի կնքվել, բայց նկատելի է հասարակական կարծիքի փոփոխությունն այդ հարցում, մանավանդ հյուսիս-

[1] «Մեղու Հայաստանի», 1864, 13 հունիսի, թիվ 23, էջ 179:
[2] Տե՛ս История США, Т. 1, с. 442.

արևմտյան նահանգներում[1]: Թերթն իրավացի է, հասարակական կարծիքում գնալով խորանում էր հաշտություն կնքելու անհրաժեշտության գաղափարը: 1864թ. ամռանը նախագահ Ա. Լինքոլնի քաղաքական հակառակորդները, նրա վրա մեծ ճնշում գործադրելով, պահանջում էին խռովարար հարավի հետ հաշտություն կնքել: Պատերազմը դադարեցնելու կոչեր էին հնչում նաև հարավում: 1864թ. մարտին 3-րդ Համադաշնության նախագահ Ջ. Դևիսը կոնգրեսին տեղեկացրեց, որ հարավում գործող «Ազատության զավակներ», «Խաղաղության ընկերություն» և շատ այլ գաղտնի կազմակերպություններ հանդես են գալիս Համադաշնությունը վերացնելու և հարավային նահանգները ԱՄՆ կազմ վերադարձնելու պահանջով[2]: Հյուսիսի նահանգներում հաշտություն կնքելու նպատակով նույնիսկ Ա. Լինքոլնի դեմ դավադրություն էին նախապատրաստում՝ փորձելով նրան հեռացնել պաշտոնից: Անդրադառնալով հաշտություն կնքելու խնդրին՝ «Մեղու Հայաստանի»-ն գրում է, որ «Թայմս» թերթի Նյու Յորքի թղթակիցը տեղեկություն է տարածել հյուսիսի և հարավի ներկայացուցիչների միջև հաշտություն սկսելու փորձի մասին: Համադաշնության նախագահ Ջեֆֆերսոն Դևիսը իր երկու գործակալներին ուղարկել է Վաշինգտոն՝ նախագահ Աբրահամ Լինքոլնի հետ բանակցություններ սկսելու համար: Նրանց հանդիպումը նախագահի ներկայացուցիչների հետ կայացել է Կանադայում, Նիագարա ջրվեժի մոտ: Ջ. Դևիսի գործակալները հանդիպել են Հորաս Գրիլիի (1811-1872թթ.) հետ և խնդրել, որ իրենց՝ Վաշինգտոն գնալու համար համաձայնություն ստանա: Այս խնդրանքին Ա. Լինքոլնը պատասխանել է, որ Համադաշնության պատվիրակներին կընդունի Վաշինգտոնում, եթե նրանք իրենց կառավարությունից հաշտություն կնքելու լիազորություն ունենան: Ջ. Դևիսի պատվիրակներն ասել են, որ նման լիազորություն չունեն: Այնժամ Ա. Լինքոլնն իր քարտուղարի միջոցով հայտնել է Հ. Գրիլին, որ միայն այն դեպքում կբանակցի հաշտություն կնքելու մասին, եթե Համադաշնությունը ճանաչի ստրկության վերացումը: Հարավի ներկայացուցիչները հայտնել են, «թե այսպիսի պայմանների վրայ անկարելի է խօսք բաց անել»[3]:

«Մեղու Հայաստանի»-ի ստացած տեղեկությունները հավաստի էին. 1864թ. հուլիսին Կանադայի հետ սահմանակից Նիագարա Ֆոլսում հյուսիսի և հարավի ներկայացուցիչները փորձ արեցին հաշտություն ձեռք բերելու նպատակով բանակցություններ սկսել, բայց հաջողության չհասան[4]: «Մեղու Հայաստանի»-ն, զարգացնելով ամերիկյան պատերազմում հաշտություն

---

[1] «Մեղու Հայաստանի», 1864, 16 մայիսի, թիվ 19, էջ 155:

[2] Տե՛ս Р. Ф. Иванов, Указ.соч., с. 143; История США, Т. 1, с. 444.

[3] «Մեղու Հայաստանի», 1864, 15 օգոստոսի, թիվ 32, էջ 251:

[4] Տե՛ս История США, Т. 1, с. 444; Р. Ф. Иванов, Указ.соч., с. 144,161-162, Կ. Սենդբերգ. Լինկոլն, Երևան, 1988, էջ 504-507:

կնքելու թեման, գրում է, որ ամերիկյան վերջին իրադարձությունների պատճառով Փարիզում լուրեր են տարածվում, թե Ֆրանսիան մտադիր է խառնվել Միացյալ Նահանգների գործերին: Այդ լուրերը հավատացնում են, որ 1864թ. Բելգիայի Լեոպոլդ թագավորի՝ Փարիզ գնալու հիմնական պատճառը Ֆրանսիայի և Անգլիայի միջև այդ հարցում համաձայնություն ձեռք բերելն էր: Խոսվում էր, որ համաձայնության պայմաններն արդեն ճշտված են: Այդ կապակցությամբ երկու կարծիք է շրջանառվում: Ոմանց կարծիքով՝ Ֆրանսիան և Անգլիան առաջարկում են միջնորդ լինել, որ հաշտություն կնքվի հետևյալ պայմանով. հարավը բաժանվում է հյուսիսից կամ նրանք կազմում են մի դաշնություն: Մյուսները գտնում են, որ Անգլիան և Ֆրանսիան ԱՄՆ-ից անջատված հարավը ճանաչում են որպես առանձին պետություն[1]:

Իրականում Անգլիայի և Ֆրանսիայի մոտեցումները ամերիկյան քաղաքացիական պատերազմի հարցում հաստատուն չէին: Իրենց քաղաքական շահերից ելնելով՝ այդ պետությունները պատերազմի նկատմամբ իրենց դիրքորոշումը քանիցս փոխեցին, չնայած ի սկզբանե հանդես էին գալիս Համադաշնության օգտին հաշտություն կնքելու միջնորդությամբ և գաղտնի աջակցում էին հարավին: 1861թ. մայիսի 13-ին անգլիական կառավարությունը իր չեզոքության մասին հրապարակած հռչակագրում հարավը ճանաչում էր ոչ թե խռովարար նահանգներ, այլ պատերազմող պետություն:

1862թ. ապրիլին Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը հարավի ներկայացուցիչ Ջոն Սլայդելին հայտնեց, որ եթե Անգլիան համաձայնի ճանաչել Համադաշնությունը, ապա ինքը նույն բանը կանի: 1862թ. ամռանը Համադաշնության պատվերով Անգլիան 290 ռազմական նավեր կառուցեց, իսկ սեպտեմբերին մտադիր էր հարավի անկախության ճանաչման հարցը քննարկել կառավարությունում: Հոկտեմբերին Ֆրանսիայի կայսրը Ռուսաստանին և Անգլիային առաջարկեց պատերազմող կողմերից պահանջել վեցամսյա զինադադար կնքել և հանել Համադաշնության նավահանգիստների շրջափակումը: 1863թ. սկզբում՝ ստրկությունը վերանայելու մասին Ա. Լինքոլնի հայտարարությունից հետո, Անգլիան հարավի ճանաչման հարցը կառավարության օրակարգից հանեց: 1863թ. հուլիսին Գետիսբուրգի և Վիկսբերգի մոտ հյուսիսի հաղթանակից հետո Անգլիան և Ֆրանսիան վերջնականապես հրաժարվեցին հյուսիսային նահանգներ ներխուժելու մտադրությունից[2]: Անդրադառնալով եվրոպական երկրների դիրքորոշմանը՝ ամերիկյան պատերազմի նկատմամբ, «Մեղու Հայաստանի»-ն գրում է, որ երբ ա-

---

[1] «Մեղու Հայաստանի», 1864, 8 օգոստոսի, թիվ 31, էջ 242:

[2] Տե՛ս Ефимов А. В., Гражданская война в Северной Америкр, В сб: История дипломатии, Сост. А. Лактионов, М., 2009, с. 508-512; История США. Т. 1, с. 450-451.

մերիկյան նահանգների միջև պատերազմ սկսվեց, Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը, «կամենալով պղտոր ջրում որս անել հեշտութեամբ», իր դրածո Մաքսիմիլիանին Մեքսիկայի կայսր հռչակեց: Նապոլեոն III-ը մտածում էր, որ մինչ ամերիկյան պատերազմի ավարտը, իրեն կհաջողվի Անգլիայի օգնությամբ Մեքսիկայում կայսրություն հաստատել: Դա նրան հնարավորություն կտար ամրապնդել իր դիրքերը Ֆրանսիական գահին և կայսերական իշխանության տարրը տարածել ամերիկյան մայրցամաքում, ուստի հարավի նահանգներին գաղտնի օգնություն էր ցույց տալիս: Բայց Ֆրանսիան իր հաշիվներում սխալվեց, քանի որ Անգլիան նրան այս հարցում չաջակցեց[1]: Ճիշտ ընկալելով Ֆրանսիայի կայսեր նկրտումները Մեքսիկայում՝[2] «Մեղու Հայաստանի»-ն եվրոպական մամուլի նյութերով տեղեկացնում է, որ 1864թ. հյուսիսի և հարավի միջև հաշտություն կնքելու հարցը քանի գնում, այնքան հրատապ է դառնում հասարակության տարբեր խավերի շրջանում: Որպես դրա վկայություն՝ «Մեղու Հայաստանի»-ն տպագրում է «Independence Belge» թերթի՝ Փարիզի թղթակցի 1864թ. հուլիսի 23-ի (օգոստոսի 4-ի)՝ Նյու Յորքից ստացված նամակը, որի հեղինակի կարծիքով՝ Միացյալ Նահանգներում բոլորը պատերազմից հոգնել են: Շատերը զգում են խաղաղության կարիքը և հույս ունեն, որ շուտով հաշտություն կկնքվի: Մարդկանց անուններ են տալիս, ովքեր որոշել են համախմբվել և Ա. Լինքոլնին համոզել հաշտություն կնքել: Այս մարդիկ անգամ պարտավորություն են ստանձնել նրան կրկին նախագահ ընտրել, միայն թե նա անցնի խաղաղության կողմնակիցների ճամբարը: Հուլիսի 21-ին (օգոստոսի 2-ին) Նյու Յորքում կայացած ժողովում երեք հոգուց բաղկացած մի պատվիրակություն է ընտրվել Վաշինգտոն գնալու և այդ առաջարկությունը Ա. Լինքոլնին ներկայացնելու համար: Օգոստոսի 6-ին Սեյմուրի մոտ կայանալու է խորհրդակցություն, որտեղ խաղաղության կողմնակիցները պետք է որոշեն իրենց հետագա անելիքները[3]:

Հյուսիսի և հարավի միջև բանակցությունների ճանապարհով հաշտություն կնքել չհաջողվեց: 1864թ. հուլիսի 18-ին Ա. Լինքոլնը հայտարարեց. «Հաշտության մասին ցանկացած առաջարկություն Միությունը վերականգնելու և ստրկությունը վերացնելու մասին ԱՄՆ կառավարությունը կընդունի և կքննարկի»[4]: Սակայն այսպիսի առաջարկություն հարավի կողմից չստացվեց, և պատերազմը շարունակվեց: Հյուսիսի զորքերը 1864թ. սեպտեմբերին շարունակեցին առաջխաղացումը: 1864թ. նոյեմբերի 8-ին կայացած նախա-

---

[1] «Մեղու Հայաստանի», 1866, 15 հունիսի, թիվ 2, էջ 9-10:

[2] Տե՛ս Ефимов А. В. , Указ. соч. С. 525-526; История Франции, Отв. ред. А. З. Манфред, Т. 2., М., 1973, с. 356.

[3] «Մեղու Հայաստանի», 1864, 30 օգոստոսի, թիվ 34, էջ 266:

[4] История США, т. 1, с. 444.

գահական ընտրություններում Ա. Լինքոլնը հաղթեց, որով հարավի գործակալները կորցրին հյուսիսում իշխանության համար պայքարի բոլոր հնարավորությունները: Համադաշնության բանակում զանգվածային դասալքություն սկսվեց: Դեկտեմբերի 15-16-ին հյուսիսի զորքերը հաղթանակ տարան Նեշվիլում, իսկ դեկտեմբերի 22-ին գեներալ Ուիլյամ Շերմանը (1820-1891թթ.) գրավեց Սավանան: Նախագահ Ա. Լինքոլնը պատերազմում Համադաշնության նկատմամբ հաղթանակի ականատեսը չդարձավ: 1865թ. ապրիլի 14-ին Վաշինգտոնում՝ «Ֆորդ» թատրոնում, նա դերասան Ջոն Բութի կողմից մահացու վիրավորվեց և գիտակցության չգալով՝ հաջորդ օրը մահացավ: «Մեղու Հայաստանի»-ն հայտնում է Ա. Լինքոլնի մահվան մասին: Ըստ թերթի՝ գեներալ Ու. Գրանտը այդ օրը նույնպես պետք է թատրոնում լիներ, բայց հրավիրված է եղել կառավարություն և այդ պատճառով խուսափել է վտանգից: Մարդասպանը դերասան Բութն է[1]:

«Մեղու Հայաստանի»-ն 1865թ. ավարտված ամերիկյան քաղաքացիական պատերազմը գնահատում է որպես «ներքին պատերազմ», որն ավարտվեց հյուսիսի հաղթանակով: Թերթը հյուսիսի հաղթանակը համարում է «մարդկութեան պատմութեան մէջ նշանաւոր» իրադարձություն, որը վճռեց ստրկության հարցը: Ելնելով այս իրողությունից՝ թերթը համոզմունք է հայտնում, որ Միացյալ Նահանգների ներքին պատերազմում հյուսիսի հաղթանակը վերջ կդնի «մարդկային մեկ ցեղի (սևերի) ազատութեանը»: Ամերիկյան սևամորթները, որոնք այսքան դարեր դատապարտված էին «իբրև կիսամարդիկ, ստրուկ լինելու ու աշխատելու ուրիշների համար», բոլորովին զուրկ մարդկային իրավունքներից, վերջապես ազատություն ստացան[2]: «Մեղու Հայաստանի»-ի եզրակացությունը ամերիկյան քաղաքացիական պատերազմի նշանակության մասին հիմնավոր էր, քանի որ Միացյալ Նահանգներում, 1865թ. դեկտեմբերի 18-ին սահմանադրությունում կատարված 13-րդ փոփոխության համաձայն, ստրկությունը վերացավ, երկրում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման, արևմտյան հողերի յուրացման ու ներքին շուկայի ամրապնդման համար:

---

[1] «Մեղու Հայաստանի», 1865, 8 մայիսի, թիվ 16, էջ 123:
[2] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1866, 15 հունվարի, թիվ 2, էջ 49:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գալեէմքերեան Հ. Գրիգորիս վ., Պատմութիւն հայ լրագրութեան, Վիէննա, 1891:
2. Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր, Խմբագրական կոլեգիա՝ Ա. Ա. Խառատյան, Մ. Հ. Մխիթարյան, Լ. Մ. Գևորգյան, հ. 1, Երևան, 2006:
3. Սենդբերգ Կ., Լինքոլն, Երևան, 1988:
4. Ефимов А. В., Гражданская война в Северной Америке, В сб: История дипломатии, Сост. А. Лактионов, М., 2009
5. Иванов Р. Ф., Гражданская война в США, М., 1960, с. 39.
6. Иванян Э., История США, М., 2008.
7. История США, Глав. ред. Г. Н. Севостьянов, Т. 1, М., 1983
8. История Франции, Отв. ред. А. З. Манфред, Т. 2., М., 1973
9. Словарь иностранных слов, Ред. Спиркин А.Г. и другие, М., 1982
10. Уильям З., Фостер Очерк политической истории Америки, Пер. с. анг., М., 1953
11. Яковлев Н., Джордж Вашингтон. М., 2003
12. Foner E. Politics and Ideology in the Age of the Civil War. New York, 1980
13. «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), 1861, 1862, 1864, 1865, 1866

THE ASSESSMENT OF THE AMERICAN CIVIL WAR DONE BY THE WEEKLY «MEGHU HAYASTANI» («BEE OF ARMENIA»)

MOVSISYAN FELIKS

Doctor of Historical Sciences, Professor,

Head of the Chair of History, Vanadzor State University

e-mail: felmov@mail.ru

The coverage of the American Civil War and its assessment done by the weekly «Meghu Hayastani» representing the Eastern Armenian national conservative current of 1861-1865, has not been thoroughly studied in Armenian historiography. The weekly addressed this issue in its "Political Theory" and "Various Fame" sections, mainly on the basis of received news and European and Russian press publications. «Meghu Hayastani» considered the split of the United States of America and the conflict between the industrial north and the slavish south inevitable, which should have led to a civil war. The weekly describes the American war as a national-patriotic one, the main reason for which is the conflict of economic interests, slavery and the slave trade. According to the newspaper, the American states only outwardly represent the large and powerful state. In fact, they differ in the origin, language,

religion, enlightenment, occupation, climate, and wealth of their population. All this prevents Americans from being united.

Until now, the United States and its people have been united by the idea of freedom. Now this idea has led to a bloody war. According to «Meghu Hayastani», reconciliation of conflicting North and South will not be easy, the war will last a long time, and the sides will suffer great human and material losses. The winner of the war will be the North, which has more troops, money, developed economy and intellectual potential. The American War will be the last in history where slaves and blacks will die for their independence.

According to «Meghu Hayastani», the victory of the North in the war will lay the foundation for the freedom of several million blacks, who had been doomed to be half-human, slaves and deprived of human rights for centuries. With this in mind, the newspaper considers the American Civil War a significant event for humanity.

Key words: *United States, South, North, disruption, confederation, war, abolition of slavery, Armenian press.*

АМЕРИКАНСКАЯ ГРАЖДАНСКАЯ ВОЙНА В ОЦЕНКЕ ЕЖЕНЕДЕЛЬНОЙ ГАЗЕТЫ «МЕХУ АЙАСТАНИ» («ПЧЕЛА АРМЕНИИ»)

МОВСИСЯН ФЕЛИКС
Доктор исторических наук, профессор,
Заведующий кафедрой истории
Ванадзорского государственного университета
электронная почта: felmov@mail.ru

Освещение американской гражданской войны 1861-1865гг. и ее оценка в еженедельной газете «Меху Айастани», представляющей восточноармянское национально-консервативное течение, в армянской историографии не исследовано в достаточной степени. К данной проблеме еженедельная газета обращалась в разделах «Политическое обозрение» и «Различные известия», основываясь на информации, полученной из публикаций европейской и российской прессы.

По мнению газеты «Меху Айастани» , раскол Соединенных Штатов Америки и противоборство между промышленным Севером и рабовладельческим Югом было неизбежными и должно было непременно привести к внутренней войне. Еженедельник характеризует американскую войну как национальную и народную, основной причиной которой стало столкновение торгово-экономических интересов, рабство и работорговля. По мнению газеты, Американские Штаты только внешне представляют целостность обширного и могу-

щественного государства. В действительности же они отличались происхождением населения, языком, религией, степенью просвещенности, родом деятельности, природно-климатическими условиями и уровнем достатка. Все это мешало американцам быть сплоченными и едиными. До этого Американские Штаты и народ сохраняли свою монолитность благодаря идее свободы. Теперь эта идея стала причиной кровопролитной войны. По наблюдению газеты «Меху Айастани» , трудно будет примирить противоборствующие Север и Юг, война продолжится долго, а стороны понесут большие человеческие и материальные потери. Победителем в войне окажется Север, который имеет больше войск, денег, развитую экономику и интеллектуальный потенциал. Американская война станет последней в истории войной, в которой рабы и чернокожие будут погибать во имя своей свободы. По убеждению газеты «Меху Айастани» , победа Севера в войне заложит основы для обретения свободы миллионами чернокожих, которые веками обречены были иметь положение полулюдей, рабов, лишенных человеческих прав. Исходя из подобных рассуждений, газета считала американскую гражданскую войну значительным событием в истории человечества.

Ключевые слова: *Соединенные Штаты, Юг, Север, раскол, разделение, конфедерация, война, отмена рабства, армянская пресса.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 13.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 12.09.2021թ.: